որդ չորրորդ Կաթուղիկոս Եզնիս վաթսուն և մի ազգային եկեղեցական ժողովք է գումարել. — միթէ հեղինակի ընդունածը միայն պիտի համարի օրինաւոր ժողով։ — Բաւական է որ ազգը գումարուելով թէ շատ՝ թէ սակաւ՝ Եկեղեցական ժողով է կազմել, և Եկեղեցական ժողովքով ընդունել է կամ հերքել մի կրօնական խնդիր. ընտրել է կամ մերժել Հայրապետութեան մի յաջորդ թէ միաձայնութեամբ, տարաձայնութեամբ, թէ խաղաղութեամբ ու սիրով. ժողովը ժողով է կարծեալ՝ Ազգային և Եկեղեցական։

Ուստի Հեղինակը՝ որ Փիլիպպոս Կաթուղիկոսի նախագահութեամբ եղած ժողովքն ինքը յԵրուսաղէմ, "մինչև մեր օրերը, կգրէ թէ, այլ օրինաւոր եկեղեցական ժողով չէ գումարուած մեր ազգին մէջ,,։ Մենք էլ կասենք որ՝ իւր այս գրածը օրինաւոր չէ մեր ազգին համար, թողլով որ ընթերցողք յետ Փիլիպպոս Կաթուղիկոսի եղած ժողովների օրինաւորութիւնը կարդան յետ այսորիկ Հայաստանեայց Եկեղեցւոյ Ժողովոց պատմութեանը մէջ, որ առանձին գրքով եւ կտպուի՝ Արարատի մէջ հրատարակուածին զուգընթաց։

Մենք հանգուցեալ արժանայիշատակ Մսեր Մսերեանցի քանքարը ճանաչելով, որ այս տետրակի հեղինակն է, կըտարակուսինք նորա գրչէն ելնելուն այսպիսի կէտեր, որ քան զմեզ աւելի նշմարած կը լինէր այդ յօդուածը, հետևաբար և կարծիք կտանինք եթէ փոփոխութիւն կրած լինին. այս կարծիքն էլ կյուսանք որ կը փարատէ տետրակի հրատարակող՝ Հեղինակի որդին՝ որ խնդրած է թղթատուութիւն վաճառելոյ տետրակին ի Հոգևոր Իշխանութենէ։

ԱԲԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
Ի ՎԵՐԱՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՅՈՑ.
(Շարունակութիւն.)

Մասն Երկրորդ.

Ա. — Հայաստանի ամենահին կրօնն էր՝ բնութիւնը, արեգակը և լուսինը պաշտել։ Արամազդ, որ ըստ գրականութեան ասել է առնացի չաստուած կամ թէ մարդկանց չաստուած, նոցա ամենակարող չաստուածութիւնն էր, և նորան համարումէին ինչպէս նախապատճառ մարդկային ցեղի, և կամ թէ հայր ամենայն դիւցազանց։ Նորան անուանումէին նա եւս ճարտարապետ տիեզերաց, արարիչ երկնի և երկրի։ Շինել էին ի պատիւ նորա տաճարներ, խորաններ, արձաններ Արմաւիր, Անի, Բագուան և այլ քաղաքներում *)։ Մի ուրիշ չաստուածութիւն կոչեցեալ Միհրը՝ այս ինքն միակ հուր, համարուած էր ինչպէս որդի Արամազդի։ Նա էր նշանակ Տիեզերական կամ թէ կենարար հրոյն։ Նա էր որ առաջնորդումէր քաջերին ի պատերազմ, և սահմանումէր պատերազմական ձեռնարկութեանց ելքն ի նպաստ քաջերի։

(*) Ձեռագիր հայ. ի թագաւորական գրատան — Մովսէս Խոր. Գիրք 1. գլուխ Ա. Գիրք Բ. գլ. 50.

Այլ և նորա անուամբ էին արտաբերում ամենահռչակաւոր երգումն և հաստատումն բարեկամութեան կամ խաղաղութեան դաշնադրութիւնքն. Երևանում, Բագարիճում և Հայաստանի ուրիշ քաղաքներում նա ունէր տաճարներ *)։ Այդ չաստուածութեան ամենահռչակաւոր տաճարը՝ ուր տեսանելի էին Միտրիական եօթը անձաւքն քանդակուած մի քարի մէջ, Փայտակարանի գաւառումն էր հոմանուն նահանգում **)։ Երևի որ՝ առաջին տաճարը որ շինեցին Հայաստանումն՝ ի պատիւ չաստուածոց ընծայեցաւ այդ աստուածութեան, որովհետև տաճար բառը՝ որ հայերէն է՝ Մեհեան, ածանցուած է Միհր բառից։ Իւրաքանչիւր տարին միանգամ կատարումէին մի շատ հռչակաւոր տօն ի պատիւ այդ չաստուածոյ. գարունքի սկիզբումն էր լինում որ անումէին նուիրական հուր, վառելով մի խարոյկ մի հրապարակի մէջ, և հայցելով երկնից օրհնութիւնն։ Մի լապտեր վառուած այդ կրակից պահվումէր ամեն տաճարների մէջ ամբողջ տարին։ Այս սովորութիւնն՝ որ անյիշատակ ժամանակից է մնել՝ է առ բազում հին ժողովուրդս, և այսօր էլ գործադրվումէ ոյժմեան Հայերի մէջ։ Այդ լինումէ Տեառնդառաջի ***) օրը կամ թէ նորա նախընթաց գիշերը։

(*) Ձեռագիր. Ինճիճ. Չամչեան հատ Ա. էջ 389։

(**) Մովսէս Խ. էջ 360։ Ծ. Հ.

(***) Անտեղի է այս, և երբեմն Արարատի մէջ հերքումն հրատարակուած է սորա համար։ Ծ. Խմբ.

Բ։ — Այս արարողութիւնը հասարակօրէն անումեն մի բաւականին ընդարձակ տեղում առընթեր եկեղեցւոյն։ Եթէ պատահի որ այդ օ-ը եղանակը խառնակ լինի, և չկարողանան կատարել բաց օդի տակ, այն ժամանակ կատարումեն եկեղեցւոյ գաւթում, այրելով միայն մի քանի այրողական հրանիւթեր մի մեծ պղնձէ ամանի մէջ, և պահելով միշտ սովորութեան մի և նոյն ծէսերն։ Այն այրելի նիւթերն՝ որ պիտի էականապէս կազմեն այդ նուիրական հրոյ խարոյկն, են ուռի և ձիթենւոյ ճիւղեր և ամեն տեսակ ծաղիկներ՝ որ կարելի է գտանել այդ եղանակում, մի փոքր և չոր ցորեն, մի բուռ խունկ, և այնքան եւս ոչխարի բուրդ։ Այն անձինք՝ որ իրաւունք ունին վառելու այդ հրատը, ընդհանրապէս երիտասարդ անձինք են, որ նորեն ամուսնացած լինում տարուայ ընթացքում։ Արարողութիւնն միշտ տեղի է ունենում մի տեսակ հոգևոր հանդիսով. երկրի եպիսկոպոսն կամ իւր փոխանորդն կղերականների, երիտասարդ ամուսնացածների և ժողովրդեան ընկերակցութեամբ գնումէ թափորով խարոյկի տեղն, բոլորեքեան ունին ի ձեռին մի մոմ՝ որ դեռ վառուած չէ։ Երբ հասանումեն այն տեղ, կղերականք սկսումեն ասել մի քանի աղօթք՝ որ համեմատութիւն ունենան այդ բանին, յետոյ վառումեն երիտասարդ ամուսնացածների մոմը, պաղատելով հօրն երկնաւորի, և վերստին աղօթելով, յետոյ նրանց հրամայումեն վառել խարոյկն ի միասին, և հաղորդել մերձակայից։ Երիտասարդ անձինքն կրակը դնելուց յետոյ ամենայն կողմից վառումեն յաջորդապէս բոլոր հանդիսականաց մոմերն. կղերականք

և ժողովուրդն այն ժամանակ սկսում են երգել ուրիշ աղօթք՝ մինչ այն ժամանակ՝ որ բոլոր նիւթն մոխրանում է, վերջապէս նոքա տալիս են իւրեանց օրհնութիւնն և յետ են դառնում: Արարողութիւնը վերջանալուն պէս ժողովուրդը աճապարում է մօտիկանալու խարոյկի տեղից, որ ժողովի մի քանի խանձող, կամ թէ մի քիչ մոխիր՝ որ պահուեն իւրեանց տըներումն մի տեսակ պատկառանօք և մեծարանօք:

Գ.:—Հաւանական է կարծել որ Միհրի պաշտօնը, կամ թէ տիեզերական հուրըն, ի բնէ հաստատուած էր Հայաստանումն առաջ քան թէ Ասորացւոց և Պարսից մօտ, որովհետև հուր անունն՝ որոյ ներքոյ Ասորացիք պաշտումէին գլխաւոր կրակը, կամ թէ կենդանարար նիւթոց սկզբնապատճառը, է հայերէն բառ կամ արմատ՝ որից ծագում են բազմաթիւ բաղկացեալ կամ ածանցեալ բառեր այդ լեզուի մէջ, և մի և նոյն ժամանակ է չորս տարերց մինի անունն և նշանակում է տիեզերական հուր, կամ թէ գլխաւոր ծնող և պաշտպան կենդանի էակներին: Հայերն ունին այլ և մի ուրիշ բառ նշանակելու համար նիւթեղէն հուր, որ մեզ այրում է կամ թէ որ մեզ կարող է վնասել, այդ է կրակ բառն, որ ըստ գրականութեան ասել է սպառիչ: Մենք ունինք նա և անթիւ յատուկ անուններ թէ տեղի և թէ մարդկանց՝ որ ձևացած են հայկական Միհր բառից, որք են օրինակի համար՝ Միհրդատ, Մէհրուժան, Միհրան, Միհրներսէհ, Միհրվշնասպ և այլք՝ որ անցկացած դարերում՝ Հայք և Պարսիկք ի միասին գործ էին ածում:

Դ.:—Թէ և այս երկու ժողովուրդներն պաշտումէին հուրը Միհր անուամբ, սակայն մեծ զանազանութիւն կար նոցա մէջ: Առաջինների նուիրական հուրն մի աներևոյթ հուր էր, և նորան ներկայացնումէին տարէնն մի անգամ խարոյկի կերպարանքի տակ. բայց երկրորդների հուրն նիւթեղէն էր՝ որ պաշտումէին և պահումէին մշտնջենաւորապէս տաճարներումն, և նորա մասին Հայերն նորանց կոչումէին կրակապաշտ՝ այս ինքն նիւթեղէն կամ թէ կրակ պաշտող: Պարսիկներն համարումէին Զօրոաստրին*), ինչպէս չաստուած և Զէրօվանի որդի**), և Հայերն իմանումէին Զօրոաստրին***)՝ մի մոլորական մարդ՝ որ եղծել էր իւրեանց կրօնը և ապականել էր Պարսիկներին: Զանազան ժամանակներում երբ Պարսիկներն ուզումէին նուաճել Հայոց գաւառներն, նոքա աշխատումէին գրաւել բնակիչների սէրն, կրօնի յայտնի միաձևութեամբ նոցա յուշ ածելով՝ որ Միհր մի և նոյն չաստուածն է՝ որին պաշտումէին հաւասարապէս Պարսիկներն որպէս և Հայերն, ասելով թէ՝ այն զանազանութիւնը՝ որ կար երկու ժողովրդոց մօտ՝ աւելի Պարսիկների համար մի դրուատանք էր, որ նորան աւելի ջերմեռանդութեամբ պաշտումէին: Երբ Արտաշիր Սասանեան մտաւ Հայաստան երրորդ դարուայ միջումն, հրամայեց վառել անդադար նուիրական հուրն՝ բոլոր այս երկրի տաճարներումն. բայց այս հնարը փոխանակ շողոքորթելու՝

(*) Գուցէ Որմիզդին ակնարկէ:

(**) Զրուան:

(***) Գուցէ Զրադաշտին լինի.

ժողովուրդն ևս առաւել գոգոնից ընդդէմ Պարսից։ Հինգերորդ դարում երբ Պարսիկներն ուզումէին հաստատել մոգութիւն Հայաստանումն, այս երկրի զօրապետի մէկը՝ կոչեցեալ Արշաւիր Կամսարական՝ ասումէր Պարսից Թագաւորին հրապարակաբար իւր հայրենակիցների կողմից, որ ոչ իրենք և ոչ էլ իւրեանց պապերը և նախնիքներն երբէք չեն ընդունել մոգութիւնն կամ կրակապաշտութիւնը Պարսից նման *)։

Ե։—Մի երրորդ չաստուածութիւն՝ տարբեր Միհրից՝ էր արեգակն, Արև, Արեգ, Արեգակն՝ Արեգ կամ Արէս անուամբ. առաջինն ցուցանումէ մեզ լուսաւորող արևը, տեսանելի արեգակը, և նշանակումէ առաջին առնացի. երկրորդ բառըն նշանակումէ ըստ գրականութեան արու կամ էգ և նշանակումէ Արևելք ընդհանուր արեգակ՝ կամ թէ անմատչելի արևն. երրորդը նշանակումէ աչք արեգակի կամ թէ արեգակի սկաւառակ. երկու վերջին բառերն նշանակումեն ուրիշ որակութիւնք՝ որ տալիս էին արեգակին, և նշանակումէ առնական կամքի, մարտ կամ յաղթող։ Հայոց ամիսների մինն նա և կրումէ Արեգ անունն։ Մեծ Հայաստանի նախկին աշխարհագրութեան մէջ, իւր նահանգաց մէկն շինուած Արաքսի հիւսիսային կողմում՝ կոչվումէր Արէվանք, բառ՝ որ առել է կողմնակից արեգակի։

Այս բարերար աստղի պաշտումն աւելի ընդհանրական էր և գուցէ առաջինն՝ որ հաստատուեցաւ ի Հայաստան աշխարհ։ Չնայեցեալ այն հալածանաց և բազմատեսակ փոփոխութեանց՝ մինչ այսօր ևս գտանվումեն այնպիսի Հայեր՝ որոնք պաշտումէին արեգակը և որ իւրեանց մէջ կոչվումեն—Արևորդիք։ Հին ժամանակում տաճարներ, խորաններ էին շինել ի պատիւ նորան, և ամեն տեղ պաշտվումէր։ Թէ և Հայերն ընդհանրապէս դառնած են քրիստոնէութեան մէջ, սակայն արեգակ անունն նոցա մօտ աւելի գործ է ածվում՝ քան թէ ուրիշ քրիստոնեայ ժողովրդոց մօտ. իւրեանց աղօթքի գիրքերում և իւրեանց եկեղեցական երգերում, որպէս նշանակ աստուածային, կամ աշխարհի Փրկչի բարութեան՝ քաղաքական այն բոլոր սովորութեանց մէջ, ուր որ լինումեն կրօնական արարողութիւնք, արեգակը համարվումէ մի բան։ Եթէ մի հիւանդ մերձ է մեռանելու, շրջումեն նորա անկողինն դէպի արևելք, մի և նոյն բանն էլ անումեն երբ մեռեալն դնումեն գերեզմանի մէջ *)։ Մեռելների թաղելն ևս անումեն ցերեկով և երբէք չեն թաղում արեգակը մտանելուց յետոյ։ Ընդհանրապէս բոլոր եկեղեցիներն և խորաններն դէպի արևելք են շինուած։ Եթէ մէկը կամենումէ աղօթք անել եկեղեցուց դուրս, շրջումէ իւր դէմքը դէպի արևելք։

(Շարունակելի)

Թ. ՕՐ. ՍՕՖԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ

(*) Ղազար Փարպ. էջ 142.

(*) Ի Ս. գրոց ուսանելով (Մատ. ԻԴ, 27) թէ Քրիստոս՝ յարևելից իբրև փայլակն պիտի գայ, ննջեցեալքն և թաղեալքն երես դէպ յարևելս կդնեն՝ և ոչ այլ նպատակաւ, և այս ընդհանուր մի օրինակ գեղեցիկ սովորութիւն է և ունի իւր օգուտները։ – Հայք արևուն այնպիսի կրօնական և քաղաքական նշանակութիւնք չեն տար՝ ինչպէս քանի տեղեր սխալուած գրած է Պ. Հեղինակ, և ներելի չէ Հրէական ինչ ինչ սովորութիւնքը նա և Հայոց վերագրել.

Պ. Խմբ.